ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսուցիչ / դասվար/ ՝ _____ Հակոբյան Արաքսյա Հրահատի

Ղեկավար՝ _____Սարգսյան Շողիկ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 3

ԳԼՈՒԽ 1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ……..5

1 . 1 . ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ …….. 5

1 . 2 . ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԵՎ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ 11

ԳԼՈՒԽ 2. ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐԱԿԻ

ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑ…….. 26

2.1 . ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. 35

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. 39

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 40

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը՝ Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: «Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ:

ՀՀ կրթակարգով ամրագրված է՝ գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների, ուսումնական գորընթացի կարտարելագործման վերահսկումն է, գնահատումը դիտվում է որպես սովորողի խրախուսման միջոց, ոչ թե զենք: Գնահատանիշը երեխայի ինտելեկտուալ մակարդակի չափանիշ չէ, գիտելիքների իրական որակը չի արտացոլում, երեխաներին դրդում է խաբեության, ցուցադրական ջանքերի և անառողջ մրցակցության: Ավանդական դպրոցում գնահատական նշանակելը հեշտ էր այն պատճառով, որ գնահատվում էր մտապահումը, իսկ այսօր մեր հետաքրքրությունների համակարգը մի ամբողջ աշխարհ է՝ բազմակողմանի ու հետաքրքիր: Ուստի գնահատման նոր գործիքներ են անհրաժեշտ:

Ավարտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել գնահատման գործընթացը, որպես ուսուցման գործընթացի կարևոր բաղադրիչ և բացահայտել տարրական դպրոցում գնահատման ձևերի ու եղանակների կիրառությունները:

Ավարտական աշխատանքի խնդիրներն են՝

1. ուսումնասիրել գնահատման գործընթացը ուսուցման համատեքստում,
2. ուսումնասիրել տարրական դպրոցում գնահատման ձևերն ու եղանակները,

3. բացահայտել տարրական դպրոցում գնահատման ձևերի ու եղանակների կիրառման հետ կապված դժվարություններն ու խնդիրները:

4. սոցհարցման միջոցով բացահայտել, թե ինչպես է գնահատումը նպաստում ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Աշխատանքի ուսումնասիրության ընթացքում կատարվել է մասնագիտական գրականության ուսումնասիրում, զրույց, սոցհարցում և վերլուծություն:

Աշխատանքի կառուցվածքը. ավարտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, երկու ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ

1.1 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրման և կիրառման հետևանքով ազգային և համաշխարհային տնտեսություններն անընդհատ վերակառուցվում են: Արդյունաբերական տնտեսությունը վերաճում է գիտելիքների տնտեսության, իսկ հասարակությունը դառնում է տեղեկատվական: Անընդհատ փոփոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի են կազմավորվում և վերաբաշխվում աշխատատեղերը: Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու, տեղաշարժվելու կարողությունը:

Կրթության դերն աճում է. միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ:

Հանրակրթության համակարգում կարևոր օղակ է տարրական դպրոցը, որի նպատակը կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան գործընթացների, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը: Նշված նպատակների արդյունավետ իրականացման գործընթացում կարևոր է տարրական դպրոցի ուսուցիչը, ում մասնագիտական պատրաստությամբ, կոմպետենտությամբ և աշխատանքի որակով է նաև պայմանավորված մեր հասարակության առաջընթացը: Տարրական դպրոցի ուսուցչի համար կարևոր անձնային որակներ են մարդասիրությունը, բարությունը, մանկավարժական տակտը,

համբերատարությունը, պատասխանատվությունը, լավատեսությունն ու հուզական հավասարակշռվածությունը, ընկերասիրությունը, սկզբունքայնությունը և այլն։

Գնահատումն ընդհանրապես աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ակտիվության, ինքնուրույնության, զարգացվածության, վարքի արժևորումն է։ Այն ուսուցման գործընթացում վերահսկողությունն իրականացնող կարևոր բաղադրիչ է, որը ապահովում է ուսուցիչ-աշակերտ հետադարձ կապը և հանդես է գալիս որպես ուսումնադաստիարակչական գործընթացի շտկման և կարգավորման միջոց։ Վերահսկողությունը ուսուցման գործընթացի պարտադիր բաղադրիչ է, որի միջոցով հայտորոշվում, ստուգվում և չափվում են աշակերտի ուսումնական գործընթացի արդյունքները։ Այսինքն՝ ուսուցման յուրաքանչյուր փուլի ավարտից հետո հարկավոր է պարզել, թե ինչպիսին են սովորողների ձեռքբերումների արդյունքները, որքանով է հաջողվել լուծել խնդիրները, իրականացնել ուսումնական գործընթացը, ինչ լրացուցիչ քայլերի կարիք կա և այլն։ Վերջին տարիներին որպես վերահսկողության տեսակ տարրական դպրոցում կիրառվում է մանկավարժական հայտորոշումը։ Այն ուսումնադաստիարակչական գործընթացի մասին ընդհանուր տեղեկությունների հավաքագրումն է։ Հայտորոշման միջոցով ոչ միայն պարզվում է ուսուցման մակարդակը, այլ նաև հնարավոր է դառնում ցուցումներ ու երաշխավորումներ մշակել ուսուցման գործընթացը բարելավելու ուղղությամբ։

Վերահսկողության փոխարեն հայտորոշման կիրառումը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից մանկավարժության տեսանկյունից վերլուծության է ենթարկվում ուսուցչի և աշակերտների համատեղ գործունեությունը, նրանց ընդհանուր արդյունքը։ Հայտորոշման միջոցով չի առանձնացվում աշակերտների աշխատանքն ուսուցչի աշխատանքից։ Ավանդական վերահսկողության դեպքում սովորողների ցանկությունները հաշվի չեն առնվում, իսկ հայտորոշման դեպքում հաշվի են առնվում ոչ միայն նրանց ցանկությունները, այլև ստեղծում են օգտաշատ դրդապատճառներ։ Այսինքն՝ ի տարբերություն ավանդական վերահսկողության, որը փաստում ու գնահատում է, միայն աշակերտների ձեռքբերումների արդյունքները, հայտորոշման միջոցով վերլուծվում են այդ արդյունքներին հասնելու ուղիները, արդյունավետ ճանապարհները, բացահայտվում խոչընդոտները և այլն։

Գնահատել նշանակում է սահմանել ինչ-որ բանի մակարդակը, աստիճանը կամ որակը: Գնահատականի միջոցով ուսուցիչն արժևորված հարաբերություններ է ստեղծում իր և աշակերտների միջև: Նա գնահատականի միջոցով ձևավորում և խմբավորում է աշակերտների հարաբերությունը, ինչի շնորհիվ ուսուցիչը բարոյական և գեղագիտական դիրքորոշում է տալիս աշակերտներին: Գնահատականի դերն այն է, որ արժևորման մակարդակով վերաբերմունք է ստեղծում աշակերտի նկատմամբ:

Դժվար չէ ենթադրել, որ գնահատականը կարող է լինել ինչ-որ չափ օբյեկտիվ, հիմնավորված, թափանցիկ, արդարացի, կարող է լինել նաև խիստ սուբյեկտիվ: Մարդկային գործոնը, նրա աշխարհայացքն ու սուբյեկտայնությունը մշտապես առկա են, հետևաբար գնահատականները հարաբերական են: Գնահատելու համար անհրաժեշտ է նաև տիրապետել այդ արվեստին: Շատ հաճախ անհամապատասխան գնահատականը ծնում է հիասթափություն և վիրավորանք՝ բացասաբար ազդելով անձի «ես»-ի վրա, խաթարելով նրա առողջական վիճակը:

Առանց գնահատականի ուսուցման գաղափարն իր զարգացումն է գտել 19–րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Այդ ժամանակամիջոցում առավել մեծ ուշադրություն էր դարձվում անձի հետաքրքրությունների, ինքնուրույնության, ստեղծագործական մտածողության, նախաձեռնողականության զարգացմանը: Միավորային գնահատմանը դեմ էին շատ մտածողներ: Ի.Ֆ.Ռաշևսկին ասում էր. «Մի՞թե դուք կարծում եք, որ միայն ձեր նշանակած միավորների միջոցով է, որ երեխաներն իմանում են, թե ինչպես են իրենք սովորում, բոլոր դպրոցականներն էլ դա ուսուցչից լավ են հասկանում, նրանք բոլորից լավ գիտեն, թե ինչի են իրենք արժանի... Նրանց համար կարևոր է, թե ինչ եք դուք իրենց նշանակում: Նրանք իրենց ճակատագիրը տեսնում են ձեր ձեռքերում, դրա համար էլ նրանք բոլորը մտածում են՝ ձեզնից բարձր միավորներ ձեռքբերելու մասին, և ոչ թե լավ սովորե- լու: Շատ օգտակար կլիներ, որ ուսումնական հաստատություններն աշխատեին առանց գնահատականներ նշանակելու»: Ե.Ս.Վոլկովը համարում էր, որ միավորները նշաններ են, որոնք անհրաժեշտ են ուսուցիչներին, կազմակերպիչներին, փոխտնօրեններին, մանկավարժական խորհրդին, և դրանք ընդհանրապես անպիտան են ու վնասակար, եթե ընկնում են երեխաների ձեռքը:

Վարդումյան Ս., Լ. Հարությունյան, Ն. Ջաղինյան. Գ. Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. Տեսություններ, մեթոդներ, գնահատում, Երևան 2003. էջ 74:

1918 թվականի մայիսի 31-ի ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի «Գնահատականը հանելու մասին» որոշման համաձայն՝ փորձ արվեց հանել գնահատականներն ուսումնական գործընթացից, լայնորեն կիրառվեցին ինքնավերահսկման տարբեր ձևեր, մասնավորապես թեստային առաջադրանքներ: Սակայն կարճ ժամանակ անց դարձյալ սկսեցին սովորողների գիտելիքների ընթացիկ և պարբերական հաշվառումը: Խորհրդային ժամանակաշրջանում սովորողների գիտելիքների հաշվառումը կատարվում էր հինգբալային համակարգով:

Հետագայում (2008թ.) ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընթացիկ ստուգումն ու գնահատումը սկսեց իրականացվել 10-միավորային սանդղակով, որը պիտի նպաստեր ուսուցման գործընթացի բարելավմանը: Համաձայն կրթական բարփոխումների և ռազմավարության՝ բացի 10-միավորային համակարգից՝ ուսումնական գործընթացում պիտի կիրառվեր նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային: Այս կապակցությամբ պետք է ավելացնել, որ գնահատման որակական եղանակները, մասնավորապես՝ բնութագրային գնահատումը պետք է ավելի լայն կիրառում ստանար, քան միավորայինը, քանի որ բնութագրելիս ընտրում ենք բառաշարք, ձևակերպում մտքեր, որոնք ավելի կողմնորոշիչ են երեխայի հետագա զարգացման, շտկման, ուղղորդման համար, իսկ միավորը պարզապես թիվ է, որն ընդգծում է սահման, կոնկրետ մակարդակ: Հաճախ նույն թիվն են ստանում երկու, երեք աշակերտներ, սակայն չեն զանազանում իրենց տարբերությունները, մեկը բավարարվում է այդ արժեքով, մյուսն ընկնում է մտածմունքների մեջ, մեկն էլ չարությամբ է լցվում անարդար վերաբերմունքի համար: Այս լաբիրինթոսային մտավոր և հոգեբանական վիճակը բացասաբար է ազդում երեխայի առողջության վրա:

Գնահատումը մարդուն ապրեցնելու համար է: Երեխաներին գնահատանիշ պետք չէ: Նրանք առանց դրա էլ կսովորեն, եթե ուսումնական գործընթացը վերածենք իմացումի հրճվանքի, ոչ թե պարտադրանքի: Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը: Դա գնահատման հիմնական նպատակն է:

Ընթացիկ գնահատման կարևոր նոր մոտեցումներից մեկն էլ հենց այն է, որ պետք է ուշադրություն դարձվի ոչ միայն սովորողի՝ գիտելիքը մտապահելու և վերարտադրելու, այլև այն կիրառելու կարողությանը:

Ընդհանուր գնահատականի մեջ տնային աշխատանքի համար սահմանված է ավելի ցածր գործակից, քան դասարանում գրված աշխատանքի համար, քանի որ «հաշվի է առնվում», որ գուցե տնայինը ոչ միշտ է աշակերտի «ձեռքի գործը»:

Բանավոր հարցումներին՝ կենդանի շփումներին, հատկապես՝ լեզուների ուսուցման դեպքում, լուրջ տեղ է տրվում և լրացվում է այն բացը, որի մասին ներկայումս հաճախ խոսվում է ամփոփիչ գնահատման՝ ավարտական և միասնական քննությունների առումով:

- սովորողի գիտելիքների, կարողությունների, ու հմտությունների տիրապետման ստուգումը,
- արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա՝ ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի բացահայտումն ու վերհսկումը,
- գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը:

<u>Հանրակրթական դպրոցներում</u> գոյություն ունեն գնահատման երկու հիմնական տեսակներ՝ <u>ամփոփիչ</u> և <u>ձևավորող</u> գնահատում: <u>Ամփոփիչ</u> գնահատման նպատակն է աշակերտի առաջադիմության գնահատումը ժամանակի որոշակի հատվածում և գրանցելու ու հրապարակելու առաջադիմության առկա մակարդակը: <u>Ձևավորող</u>գնահատման նպատակն է ստուգել աշակերտի յուրացման մակարդակը ժամանակի որոշակի հատվածում, որպեսզի տեղեկություն ստանանք այն մասին, թե ինչպես կատարելագործենք նրա կողմից նյութի յուրացումը:

Գնահատումը իրականացվում է 10-միավորային սանդղակով:Դրական գնահատական են համարվում 4-10 միավորները: Բացի 10-միավորային համակարգից՝ ուսումնական ՝գործընթացում կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային:

http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829 Հանրակրթության պետական կրթակարգի մասին:

Հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կարող են կիրառվել գնահատման այլ համակարգեր: Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի աճի բնութագիր: Միավորներով և ստուգարքային գնահատումը կիրառվում է սկսած երրորդ դասարանից: Տարրական դպրոցն ավարտողը ուսումնական տարվա վերջին լրացնում է հատուկ մշակված հարցարան, որը հնարավորություն է ընձեռնում պարզելու ուսումնական գործընթացի արդյունքնում նրա ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները, ինչպես նաև մտագործունեության մակարդակը:Այս ստուգումների արդյունքներն ունեն միայն տեղեկատվական բնույթ: Չնավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը միավորային համակարգով չի գնահատվում:

Ըստ գնահատման 10 բալային համակարգի, 1 գնահատականը համարվում է շատ վատ, 2՝ վատ, 3՝ անբավարար, 4՝ բավարար, 5՝ միջին, 6՝ միջինից բարձր, 7՝ լավ, 8՝շատ լավ, 9՝ գերազանց , 10՝ բացառիկ: Մասնագետը նշեց, եթե համեմատենք այսօր գործող գնահատման 5 բալանոց համակարգի հետ, ապա 1,2 և 3. գնահատականներրն կլինեն այսօրվա 2-ը, 4, 5 և 6 -ը՝ 3-ը, 7-8-ը կհամարվեն այսօրվա 4-ը, 10 և 9 ՝5-ը: Մասնագետը վստահեցրեց, որ միավորների նման բաշխվածությունը հնարավորություն է տալու առավել ճկուն գնահատել:

1.2 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԵՎ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատման սկզբունքներն են՝ արդարությունը, օբյեկտիվությունը, հուսալիությունը, անկողմնակալությունը, հավաստիությունը, հիմնավորվածությունը, մատչելիությունը, թափանցիկությունը և այլն։ Բացի նշված համակարգից, կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային։

♦ Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում։ Ընթացիկ գնահատումն իրականացվում է խոսքային բնութագրման միջոցով, իսկ տարվա վերջում գրանցվում է սովորողի աճի բնութագիրը։ Ընթացիկ գնահատումն ապահովում է շարունակական տեղեկույթը՝ ուսուցման ընթացքն ուղղորդելու և ուսումնառության որակը բարելավելու համար։ Ընթացիկ գնահատումը լինում է երկու ձևի՝

1. **Ուսուցանող** (ձևավորող) գնահատում, այն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և ուղեկցվում է առաջադրանքի կատարման վերաբերյալ աշակերտին ուղղված մեկնաբանություններով, դիտողություններով, հետադարձ կապի ապահովմամբ։ Ուսուցանող գնահատման համար երաշխավորվում են աշխատանքի հետևյալ տեսակները՝ տնային աշխատանք, ինքնուրույն աշխատանք, գործնական աշխատանք, խմբային աշխատանք, հայտորոշիչ թեստ.

2. **Միավորային** գնահատում երաշխավորվում են ստուգման հետևյալ տեսակները՝ բանավոր հարցում, թեմատիկ գրավոր աշխատանք, կիսամյակային ամփոփիչ աշխատանք, գործնական աշխատանք։ Սովորողի առաջադիմության կիսամյակային գնահատականը ձևավորվում է ստուգման նշված տեսակներից, նրա վաստակած գնահատականների հիման վրա։ Բոլոր ժամանակներում մանկավարժ գիտնականները փորձել են որոնել թվանշաններով գնահատման ուղիներ, միավորային ոչ մի համակարգ չի կարող ստույգ արտահայտել աշակերտի ուսումնական գործունեության արդյունքների չափը, խորությունը, մակարդակը։ Գնահատականը երբեմն կատարում է կարգապահության ամրապնդման, ինչպես նաև պատժի գործառույթ։ Արդի գնահատման համակարգերի վերլուծությունը ցույց է տվել, որ ընթացիկ գնահատման գործող համակարգը հնարավորություն չի տալիս ապահովելու սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջ բազմազանության բացահայտումը, քանի որ սովորողի ուսումնառության

իրական պատկերը ստանալու նպատակով անհրաժեշտ է կիրառել և համադրել ստուգման տարբեր ձևեր և տեսակներ»։ Այսօր դեռևս բավարար չափով մշակված չեն սովորողների բարոյական որակների, վարքագծի, արժեհամակարգի գնահատման ձևերն ու գործիքները, որոնք դեռևս տրամաբանական ամբողջականություն ներկայացնող ավարտուն տեխնոլոգիաներ չեն, այլ միայն գնահատման առանձին եղանակների հանրագումար, մասնավորապես՝ նիշային։ Գնահատման արդյունավետությունն ու օբյեկտիվությունը կարելի է ապահովել միայն մանկավարժական հետևյալ պահանջների բավարարման դեպքում.

♦համակարգվածություն,

♦համալիր ամբողջություն,

♦բազմագործոնային բնույթ,

♦մարդասիրական ուղղվածություն,

♦ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ կազմակերպում,

♦հոգեբանական և մանկավարժական ախտորոշիչ միջոցների կիրառում, գնահատման նկատմամբ աշակերտակենտրոն՝ տարբերակված, անհատական մոտեցում,

♦աշակերտի կողմից գնահատման համակարգի ձևերի և մեթոդների գիտակցում և ըմբռնում,

♦ինքնագնահատման, համադասարանցիների գնահատման և ընդհանուր գնահատման գործընթացում ակտիվ համագործակցում և երկխոսության կիրառում։

Գնահատման համակարգը ոչ միայն պետք է ուսուցչին, ծնողին, հասարակությանը՝ տեղեկույթ հաղորդողին՝ բացահայտելու համար սովորողի զարգացման ընթացքը, այլև էական նշանակություն ունի հենց իր՝ սովորողի համար։ Սովորողը գնահատականը պետք է ընկալի՝ ուղղորդելու համար իր ակտիվությունն ու ջանքերը ուսումնառության, դաստիարակության և զարգացման ընթացքում, ինչպես նաև համապատասխան հետևությունների հանգի։ Անձը դիտարկելով որպես ամբողջական բարդ համակարգ և ուսուցման գործընթացի գլխավոր արժեք ու ախտորոշման օբյեկտ՝ մենք սահմանել ենք մի խումբ անձնակողմնորոշիչ դրույթներ, ըստ որոնց աշակերտի որակների գնահատման համակարգը կարող է արդյունավետ լինել, եթե այն բազմագործոնային բնույթ կրի և արտացոլի անձի

գործունեության բոլոր ոլորտների բովանդակությունն ու կրած փոփոխությունները։ Կրտսեր դպրոցականի գնահատման հիմնական հայտորոշիչ համակարգը ներկայացրել ենք գունային լուծման եղանակով՝ մեր կողմից մշակված առաջադիմության քարտերի տեսքով։ Դրանց վրա ընդարձակածավալ ներկայացված են այն բնութագրիչները, որոնք արտացոլում են աշակերտի հիմնական հատկանիշները.

♦ակտիվությունը, աշխատունակությունը, աշխատասիրությունը,

♦բարեխղճությունը, իմացական գործունեության ձգտումը,

♦տեսական գիտելիքների առկայությունը և դրանք կիրառելու կարողությունը,

♦հաղորդակցական և համագործակցային ունակությունները,

♦տարաբնույթ գործունեություն ծավալելու ունակություններն ու հմտությունները,

♦հանձնարարված աշխատանքի կատարման արագությունը,

♦բարեկիրթ վարվելաձևի, փոխօգնության ունակությունները.

♦ստանձնած գործի նկատմամբ պատասխանատվության զգացումը,

♦գործունեության տարբեր ոլորտներում դրսևորած ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը, մտքի ճկունությունը,

♦հոգեկան գործընթացների զարգացվածությունն ու բազմաշերտությունը։

Նշված բնութագրիչներն ընտրված են որպես մշակված, ժամանակի և փորձառության բովով անցած, հղկված և սոցիալական նշանակություն ունեցող վարքի և գործունեության գնահատման չափանիշներ։ Սրանցից յուրաքանչյուրը բնութագրում է անձի գործունեության որոշակի ոլորտները։ Հատկանիշների առանձնացումն իրականացվել է մանկավարժական գրականության վերլուծության, ծնողների և աշակերտների միջավայրում իրականացրած անկետայի հարցման, ուսուցիչների և աշակերտների հետ անցկացրած զրույցների, դիտումների, փորձարարական գնահատումների հիման վրա։

Հայաստանի Հանրապետությունում ձևավորվում է ժողովրդավարության ազատական տնտեսության վրա հենվող քաղաքացիական հասարակություն։ Կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև

համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով:

Հանրակրթության էական բարեփոխումը և առաջանցիկ զարգացումը դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի: Պետության և ազգի անվտանգության ապահովման և հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում կիրառվում են տարբեր անհատական մոտեցումներ /խրախուսում, ոգևորում/ երեխաների գիտելիքները, կարողությունները և հմտությունները այլ կերպ չեն գնահատվում:

Միջնակարգ հանրակրթական և հատուկ ուսումնական հաստատություններում կիրառվում է գնահատում, որը հանդիսանում է ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց:

Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը:

Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումը և դրա հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի վերահսկումն է:

Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը:

Գնահատման գործող համակարգի վերափոխումը պայմանավորված է որոշակի հիմնախնդիրների առկայությամբ: Դրանք են՝

ա) գնահատումը հիմնականում բացահայտում է սովորողի ստացած տեղեկությունների ու փաստերի մտապահման աստիճանը և չի նպաստում նրա ճանաչողական-կիրառական կարողությունների ու հմտությունների զարգացմանը.

բ) գնահատման գործընթացը թափանցիկ չէ և ամբողջովին չի բացահայտում ուսուցման արդյունքները, չի արտացոլում սովորողի և դպրոցի առաջընթացի իրական պատկերը.

գ) դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեությունը գնահատելիս հաշվի չեն առնվում տվյալ դպրոցի առանձնահատկություններն ու հնարավորությունները, սահմանված չեն դպրոցների գնահատման միջինացված միասնական չափանիշներ.

դ) հինգմիավորանոց համակարգը չի ապահովում ճշգրիտ տարբերակված գնահատում և միավորային համարժեքության որոշման առումով բարդություններ է առաջացնում այլ երկրների գնահատման համակարգերին համադրելիս:

Սովորողների գնահատման նոր համակարգի մշակումը և կիրառությունը պետք է կատարվի առարկայական չափորոշիչների և ծրագրերի ներդրմանը զուգահեռ:

Գնահատման ներդրվող համակարգը պիտի հիմնվի արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության, թափանցիկության սկզբունքների վրա և ապահովի համադրելիությունը միջազգայնորեն ընդունված գնահատման չափանիշներին:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և ինքնագնահատման, կրթական մի աստիճանից մյուսին անցման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը.
2. սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը.
3. դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը.
4. սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը.
5. սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը.
6. մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը.

7. չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը.

8. հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին.

9. սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը.

10. դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատումը բացահայտում է նաև ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, որոշակի առարկայի յուրացման մակարդակի առանձին ուսումնական հաստատությունում, մարզում, ինչպես նաև՝ հանրապետության ողջ տարածքում:

Գնահատումը պետք է լինի.

- համապատասխան
- հավաստի
- համարժեք
- կառավարելի
- անկողմնակալ
- արդար
- արժանահավատ
- ապահով
- թափանցիկ

Յուրաքանչյուր հետազոտության սկզբում ուսուցիչները պարզում են սովորողների նախնական գիտելիքներն ու փորձը մինչև նոր աշխատանքների ու փորձառության մեջ ընկղմվելը: Դա հնարավորություն է ընձեռում ճշգրտումներ մտցնելու աշխատանքի պլանավորման մեջ, ուշադրություն դարձնելու յուրաքանչյուր սովորողի անհատական պատրաստվածությանն ու պահանջներին:

Գնահատում իրականացնելիս դպրոցը կարևորում է յուրաքանչյուր սովորողի ուսումնառությունը հետազոտությունների միջոցով և հենվում է ուսուցման ընթացքի ու արդյունքների որակի վրա:

Գնահատումն իրականացվում է հետևյալ նպատակներով.

• վերահսկել սովորողների ուսումնական գործունեությունն ու արձանագրել ձեռքբերումները,

• ուսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, ծնողներին և արտաքին մարմիններին տրամադրել ամբողջական ու հավաստի տեղեկատվություն,

• դիտարկել և կատարելագործել ուսումնական ծրագրերի բովանդակությունը,

• յուրաքանչյուր սանի ծնողներին տրամադրել փաստեր նրա ուսումնառության և զարգացման մասին,

• կապ ապահովել դպրոցի առաջընթացով հետաքրքրված կողմերի հետ:

Գնահատման նպատակն է կատարելագործել սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, անձնային աճը, ուսումնական գործընթացը և վերահսկել ուսման որակը՝ խթանելով սովորողի ներուժի առավելագույն զարգացումը:

Գնահատումը՝

• թույլ է տալիս մշտապես դիտարկել սովորողի ուսումնական գործունեությունը, պարբերաբար ապահովել հետադարձ կապը և արձանագրել ձեռքբերումները:

• խթանել առարկայի խորը ընկալումը իրական կյանքի համատեքստում իրականացվող հետազոտությունների միջոցով:

• խթանել քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը:

• հնարավորություն է տալիս սովորողին առարկայական հմտությունները կիրառել միջառարկայական կապեր ստեղծելիս և անհատական նախագիծ իրականացնելիս:

• ուսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, համայնքին, նաև վերադաս մարմիններին տրամադրում է լիարժեք և հավաստի տեղեկություն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի մասին:

• ծնողներին տրամադրում է հիմնավորված տեղեկություն յուրաքանչյուր սովորողի ուսումնառության որակի, ձեռքբերումների և առաջընթացի մասին:

• հնարավորություն է տալիս դիտարկել, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդական համակարգը:

Գնահատումը ուսումնառության և դրա կատարելագործման վերաբերյալ փաստեր, հավաստի տվյալներ հավաքելու շարունակական գործընթաց է. արտացոլում և տարբեր կողմերից ներկայացնում է առկա լավագույն փորձը,

խթանում է սովորողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը:

Ուսուցանող գնահատումը կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում. սա անընդհատ իրականացվող գործընթաց է, քանի որ ուսուցանելու, գիտելիքներ և դրանց հիման վրա որոշակի կարողություններ ձևավորելու միտում ունի և չունի նիշային գնահատման նպատակ: Ձևավորող գնահատման օգնությամբ ուսուցիչը մշտապես դիտարկում, գրանցում, նկարագրում և պարբերաբար տեղեկացնում է սովորողի ձեռքբերումների, նրա ուժեղ և թույլ կողմերի մասին:

Ուսուցանող գնահատման նպատակով միջին դպրոցում կիրառվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝ յուրացման / ինքնուրույն աշխատանք, բանավոր ելույթ, կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստ, ուսուցանող ստուգում, ստուգող հարցաթերթ, բաց հարցերով քննարկում, խմբային/ զույգային համագործակցային աշխատանքներ, գործնական աշխատանք, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, թղթապանակի բովանդակության գնահատում, հաշվետվության ներկայացում և այլն: Ուսուցանող գնահատման առաջադրանքների բովանդակությունը, տեսակը, առարկայական չափորոշիչներով ներկայացվող պահանջներին համապատասխանությունը, իրակացման հաճախականությունը, ուսուցչի դիտարկումների ձևաչափը մշակվում են յուրաքանչյուր ամբիոնի ներսում, հաստատվում է ամբիոնի ղեկավարի կողմից:

Ընթացիկ գնահատման ձևերն ու ստուգման տեսակները :

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝

ա) ուսուցանող գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և, սովորաբար, ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտողություններով և/կամ մեկնաբանություններով,

բ) միավորային գնահատում, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի (թեմաների) յուրացման աստիճանն ստուգելիս:

Ընթացիկ գնահատման ձևերն ու ստուգման տեսակները Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող գործառույթ: Ուսուցանող գնահատումն

իրականացվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, հետապնդում է սովորողի առաջադիմության բարձրացման և կրթության որակի բարելավման նպատակ:

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար գործածության մեջ են հետևյալ տեսակները `

1. բանավոր հարցում,
2. գործնական աշխատանք,
3. թեմատիկ գրավոր աշխատանք,
4. կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Միավորային գնահատման ենթակա պարտադիր աշխատանքից բացակայած սովորողի համար նշանակվում է այն հանձնելու նոր ժամկետ:

Բանավոր հարցում բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնականնյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Բանավոր հարցումը կարելի է իրականացնել առանձին սովորողների՝ տեղում կամ գրատախտակի մոտ հարցման միջոցով, աշակերտներին ուղղված բանավոր հարցերի միջոցով, տնային աշխատանքների ստուգմամբ , համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ: Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ հիմնական չափանիշներով.

1. ակադեմիական գիտելիքի իմացություն,
2. կիրառելու կարողություն,
3. ներկայացնելու կարողություն,
4. ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն,
5. միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:

Գործնական աշխատանք և կիրառություններ

Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական – կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս: Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք

վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին: Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ: Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները:

Թեմատիկ աշխատանք

Թեմատիկ գրավոր աշխատանքը միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր: հետո: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել բանավոր կան գործնական:

Առաջադրանքներն ըստ բարդության բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

1-ին կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշիչային գիտելիքների իմացություն, պարզ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն:

2-րդ կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշիչային գիտելիքների կայուն իմացություն, ոչ բարդ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն:

3-րդ կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշիչային գիտելիքների հիմնավոր իմացություն, բարդ կամ ոչ լրիվ ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են ինքնատիպ մոտեցումներ, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլեր:

Բանավոր և գրավոր հարցումների գնահատման չափանիշներ կազմելիս հաշվի են առնվում գնահատման նպատակը, առաջադրանքի տեսակը, բովանդակությունը, դրա կատարման համար գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունը և հետևյալ սանդղակը.

1 միավոր (շատ վատ) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս պատրաստվածություն չի ցուցաբերում,

2 միավոր (վատ) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է մասնակի պատրաստվածություն և թույլ էտալիս էական սխալներ,

3 միավոր (անբավարար) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություններ, թերություններ կամ բացթողումներ,

4 միավոր (բավարար) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում,

5 միավոր (միջին) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերությունն եր կամ բացթողումներ,

6 միավոր (միջինից բարձր) - 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատար լիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում,

7 միավոր (լավ) - 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ կամ բացթողումներ,

8 միավոր (շատ լավ) - 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում,

9 միավոր (գերազանց) - 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն,

10 միավոր (բացառիկ) - դժվարավուն առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում:

Կրթական բարեփոխումներ,«Մայրենի» առարկայից սովորողների ուսումնական ձեռքբերումների միավորային գնահատումըտարրական դասարաններում, Նախաշավիղ, 2010-1,էջ 3-20Մալխասյան Ս., Գնահատումն ու ինքնագնահատումը դպրոցում,Մանկավարժություն, 2008/5-6 , էջ 116-120:

Գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են՝

- օբյեկտիվություն
- արդարություն
- հուսալիություն
- անկողմնակալություն
- հավաստիություն
- հիմնավորվածություն
- մատչելիություն

Բարեփոխումը ենթադրում է գնահատման նոր համակարգի ներդրում՝ հանրակրթության իրական վիճակի վերլուծման, նրա զարգացման ուղղությունների որոշման, հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման ապահովման և միջազգային կրթական համակարգերին ինտեգրվելու նպատակով:

Գնահատման նոր համակարգի ներդրումը չի ենթադրում գիտելիքների ստուգման կիրառվող արդյունավետ մեթոդների ժխտում, այն կոչված է նպաստելու ստուգման արդյունքների հավաստիության և վավերականության բարձրացմանը:

Կրթության նպատակները, բովանդակությունը, մեթոդները, իրականացումը և գնահատումը փոխկապակցված են: Դրանց կարգավորման հիմքում ընկած գնահատման ճիշտ ռազմավարության ընտրությունը հետադարձ ազդեցությամբ պետք է խթանի կրթական ողջ համակարգի շարունակական զարգացումը:

Ներկայումս Հայաստանում աշակերտների առաջադիմությունը, ուսումնառության արդյունքները ուսուցչի կողմից գնահատվում են հիմնականում բանավոր հարցման և գրավոր ստուգման միջոցով, 10 միավորանոց համակարգով: Ընթացիկ գնահատումները ամփոփվում են կիսամյակային և տարեկան գնահատականներով, որոնց հիման վրա սովորողները փոխադրվում են հաջորդ դասարան: Գնահատման նոր համակարգի ներդրումը վերաբերում է ընթացիկ ուսումնառության ստուգումների և բոլոր տիպի քննությունների ժամանակ գնահատման նոր ձևերի և մեթոդների կիրառմանը:

http://shirakatsy.am/wp-content/uploads/2015/10/PYP_Assessment_Policy_Arm.pdfԳնահատման քաղաքականություն, 2015 թ. (հասանելի է 23 ապրիլ, 20:43)

Միքայելյան Օ. Ս., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Երևան 2010, էջ 3-5:

Գնահատման հիմնախնդիրներն են.

ա. Գնահատման գործող համակարգն արդի կրթական պահանջներին մասամբ է միայն համապատասխանում, հիմնականում կարևորվում են սովորողի տեղեկատվական պաշարը, նրա կողմից մերկ փաստերի մեխանիկական մտապահումը:

բ. Գնահատման կիրառվող ձևը հնարավորություն չի տալիս լիարժեք բացահայտելու և ճիշտ գնահատելու աշակերտների կարողություններն ու հմտությունները:

գ. Գործող գնահատման համակարգը չի համապատասխանում նորերս ընդունված նորմատիվ փաստաթղթերի, այդ թվում պետական չափորոշիչների պահանջներին:

դ. Ավարտական քննությունների բովանդակությունը, անցկացման կարգը

Բուհերի՝ ընդունելության քննությունների ներկա համակարգում առկա են հետևյալ հիմնախնդիրները.

Գնահատման նոր համակարգի ներդրումը կխթանի հանրակրթության բովանդակային բարեփոխումների իրականացմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթության ոլորտի տարբեր օղակների արդյունավետ համագործակցության ապահովմանը, կրթության կազմակերպման այլընտրանքային ձևերի զարգացմանը և կրթության ոլորտում հիմնավորված որոշումների ընդունմանը:

Ներդրվող համակարգի միջոցով աշակերտների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատումը կհամապատասխանեցվի հանրակրթության պետական կրթակարգի պահանջներին և միջնակարգ կրթության պետական չափորոշիչներին:

Գնահատման համակարգի բարեփոխումների հիմնական սկզբունքներն են.

Ստորև տրվում են գնահատման համակարգում առաջարկվող փոփոխությունների հիմնական սկզբունքները և դրանց առանձին դրսևորումները:

1. Աշակերտների համար նպաստավոր պայմանների ստեղծում, այդ թվում՝

ա. շրջանավարտը, հանձնելով պետականորեն պարտադիր ավարտական քննություններ, հնարավորություն կունենա ինքնուրույն ընտրելու իր կրթական

նպատակներին համապատասխանող քննական առարկաների մի մասը և քննության տեսակը/ավարտական կամ ավարտական-ընդունելության/.

բ. շրջանավարտները հնարավորություն կստանան բուհեր ընդունվելու համար

քննությունները հանձնել իրենց դպրոցներին համեմատաբար մոտ գտնվող բնակավայրերում.

գ. դիմորդները քննությունները կհանձնեն ներկայումս գործող ժամկետներից զգալիորեն շուտ և հնարավորություն կունենան հանգստանալու մինչև ուսումնական տարվա սկիզբը:

2. Կրթության որակի ներդպրոցական և պետական ստուգում, վերահսկում.

ա. ընթացիկ առաջադիմության գնահատումը կկատարվի բազմաբնույթ ստուգման ձևերի կիրառման միջոցով,

բ. հիմնական դպրոցի ավարտական քննությունների անցկացումն ու աշխատանքների ստուգումը կվերահսկվի՝ կիրառելով ինչպես ներդպրոցական վերահսկողություն, այնպես էլ տեսչական ստուգումներ,

գ. 2007 թվականից միջնակարգ դպրոցների շրջանավարտների պետական ավարտական քննություններն աստիճանաբար կանցկացվեն կենտրոնացված համակարգով.

դ. բոլոր առաջադրանքները կստուգվեն Նախարարության կողմից հաստատված ընթացակարգին համապատասխան ձևավորված անկախ հանձնաժողովների կողմից,

ե.քննությունների անցկացման, վերահսկման, ստուգման, համակարգչային սպասարկման և դրանց արդյունքների ամենամյա վերլուծության միջոցով տարեցտարի կբարելավվի գնահատման գործընթացը՝ հետադարձ ազդեցությամբ նպաստելով ուսման որակի աճին:

3. Քննությունների անցկացման պատասխանատվության և գնահատման օբյեկտիվության ապահովում.

ա. առաջադրանքները կգնահատվեն համակարգչային սարքավորումների կիրառմամբ՝ առավելագույնս նվազեցնելով սուբյեկտիվ գործոնը,

բ. քննությունները կկազմակերպվեն մասնագիտացված կառույցի՝ «Գնահատման և թեստավորման կենտրոն» (այսուհետ՝ ԳԹԿ) պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով,

գ. քննությունների ընթացքը և ստուգման գործընթացը կվերահսկվի Նախարարության տեսչության կողմից, մասնակից դարձնելով հասարակական կազմակերպությունների, մասնագիտական հաստատությունների, ծնողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների,

դ. դպրոցի ավարտական քննական առարկաների ցանկը կսահմանվի համաձայն առարկայական չափորոշիչների պահանջների և կհաստատվի Նախարարության կողմից,

ե. բուհը ըստ մասնագիտությունների կսահմանի առարկաների կշիռները և մրցույթի բանաձևը:

4. Քննական առաջադրանքների համապատասխանություն չափորոշիչների պահանջներին.

Բոլոր քննությունների առաջադրանքները կկազմվեն միայն առարկայական չափորոշիչներով սահմանված ծրագրային պահանջներին համապատասխան:

5. Քննությունների տարանջատում ըստ նպատակների.

Այս սկզբունքը կդրսևորվի՝ տարանջատելով ատեստատի և բուհական ընդունելության քննություններին ներկայացվող պահանջները:

6. Քննական հավասար պայմանների ստեղծում.

Այս սկզբունքը կապահովվի տվյալ առարկայի քննությունը միևնույն ժամանակ, միևնույն առաջադրանքով (թեստով, հարցաշարով, հարցարանով) կազմակերպելու միջոցով:

Թվարկված սկզբունքները, դրանց դրսևորումները և առանձնահատկությունները որոշակիացվում են սույն հայեցակարգում և դրանից բխող նորմատիվ ակտերում:

Ամիրջանյան Յ. Ս. , Սահակյան Ա.Ս. , Մանկավարժություն, էջ 263-268
https://www.panorama.am/am/news/2008/07/09/gnahatum/1315055 Գնահատման նոր համակարգ(հասանելի է 23. ապրիլ, 20:46)

ԳԼՈՒԽ 2

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2.1 ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ընթացիկ առաջադիմության գնահատումը

Աշակերտի ընթացիկ առաջադիմությունը կգնահատվի հիմնականում հետևյալ ստուգման ձևերի կիրառմամբ և դրանց զուգորդմամբ.

ա. տնային առաջադրանքների ստուգում,

բ. կարճ ժամանակ պահանջող գրավոր աշխատանք,

գ. գրավոր հարցում,

դ. ծավալուն գրավոր աշխատանք,

ե. ամփոփիչ թեստ,

զ. ինքնուրույն հետազոտություն (աշխատանք),

է. գործնական աշխատանք,

ը. խմբային աշխատանք:

Յուրաքանչյուր ստուգման նվազագույն քանակը և դրա ազդեցությունը առաջադիմության վերջնական ցուցանիշի կազմավորման մեջ կորոշվի համապատասխան

Յուրաքանչյուր առարկայի ընթացիկ առաջադիմության վերջնական (քառորդային, կիսամյակային) գնահատականը կազմավորելու համար կկատարվեն հետևյալ գործողությունները՝

1. կհաշվարկվի յուրաքանչյուր ստուգման ձևից միջին թվանշանը,

2. հաշվի առնելով ստուգման ձևերի ազդեցությունները (սահմանված կշիռները)՝

կհաշվարկվի տվյալ առարկայի վերջնական գնահատականը:

Այս եղանակների կիրառումը գնահատման գործընթացում կապահովի համակողմանի մոտեցում և կնպաստի սովորողների ինքնաարտահայտմանն ու պատասխանատվության բարձրացմանը:

Քննությունների անցկացումն ու աշխատանքների ստուգումը

Տարրական դպրոցն ավարտողը ուսումնական տարվա վերջին կլրացնի հատուկ մշակված հարցարան, որը հնարավորություն կընձեռի պարզելու ուսումնական

գործընթացի արդյունքում նրա ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Այս ստուգումների արդյունքները կունենան միայն տեղեկատվական բնույթ:

Հիմնական դպրոցի ավարտական քննությունները կազմակերպվում են դպրոցներում՝ ԳԹԿ-ի կազմած թեստերով: Աշխատանքները ստուգվում են տվյալ դպրոցի ուսուցչական կազմից ընտրված հանձնաժողովի կողմից:

Նախարարությունը կվերստուգի և կհրապարակի պատահական ընտրված որոշակի քանակությամբ դպրոցների քննությունների արդյունքները:

Միջնակարգ դպրոցի ավարտական քննությունները ընտրված տարածքային կենտրոններում կազմակերպելու և անցկացնելու համար յուրաքանչյուր կենտրոն գործուղվում են նախարարության ներկայացուցիչներ:

Բոլոր քննական առաջադրանքները կտեղափոխվեն և կստուգվեն ԳԹԿ-ում:

Առանձին մասնագիտությունների գծով /արվեստի, ճարտարապետության, ռազմամարզական և այլն/ մասնագիտական առարկաների քննությունները և ստեղծագործական մրցույթները կանցկացվեն համապատասխան բուհերում Նախարարության կողմից սահմանված կարգով:

Յուրաքանչյուր շրջանավարտ իր դպրոցի տնօրենին է հանձնելու հատուկ կազմված հայտաթերթիկում լրացված ավարտական քննությունների իր ընտրած ցանկն ու այդ քննությունների տարբերակները:

Դպրոցների տնօրենները նախարարության մարզային բաժինների օգնությամբ բուհեր ընդունվել ցանկացող շրջանավարտների հայտաթերթիկները և վճարման անդորրագրերը կուղարկեն ԳԹԿ, որտեղ դրանք կգրանցվեն և կդասակարգվեն ըստ քննությունների անցկացման վայրի ու ժամանակի:

Քննությունների անցկացումից, աշխատանքների ստուգումից և գնահատականների հրապարակումից հետո, սահմանված ժամկետում բուհերի դիմորդները ընդունելության մրցութային հայտերը ներկայացնելու են այն կենտրոններ, որտեղ հանձնել են քննությունները:

Հայտաթերթիկների ներկայացման, քննությունների անցկացման, աշխատանքների գնահատման և մրցութային հայտեր ներկայացնելու կարգն ու ժամանակացույցը կսահմանի Նախարարությունը:

Բոլոր մակարդակների քննությունների անցկացման ու փորձարկման մեխանիզմները և ընթացակարգերը ԳԹԿ ներկայացմամբ կհաստատվեն Նախարարության կողմից:

Կրթության որակը սահմանվում է, որպես «կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը, և ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների»:

Այսօր կրթության բնագավառի գերխնդիրը կրթության որակն է. «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագրով» սահմանվում է, որ մասնագիտական կրթության ոլորտում հիմնական գերակայությունը կրթության որակի բարձրացումն է: Որպես նպատակ և վերջնարդյունք սահմանվում է, որ անհրաժեշտ է «մինչև 2025 թվականը զգալիորեն ավելացնել մասնագիտական կարողություններ ունեցող երիտասարդների և մեծահասակների թիվը՝ վերջիններիս համար արժանապատիվ աշխատանք գտնելու, գործազրկությունը նվազեցնելու և գործարարությունը խթանելու նպատակով»: Կրթությունը կապված է հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ: Ըստ այդմ՝ կրթության ինստիտուտի իրականացրած գործառույթները ծառայում են ոչ միայն մեկ սոցիալական ինստիտուտի գործառնմանը, այլ նաև հասարակությանը: Այս համատեքստում մեծապես կարևորվում է բարձրագույն կրթության որակը, որն անմիջականորեն կապված է և իր ազդեցություն է թողնում ինչպես կրթական ինստիտուտի, այնպես էլ հասարակության կենսագործունեության համար կարևոր նշանակություն ունեցող այլ ինստիտուտների, այդ թվում՝ տնտեսության, առողջապահության, արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացման վրա: Այսինքն՝ մասնագիտական կրթության որակը պետության զարգացման և գործառման կարևոր ցուցիչներից մեկն է: Կրթության որակը, որպես սոցիալական և մանկավարժական համակարգ, նկարագրվում է այնպիսի ցուցանիշների միջոցով, որոնք բնութագրում են գործունեության վերջնական արդյունքը: Կրթության որակի

սահմանման, հետազոտման և դրա բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման գործընթացում նախ և առաջ բախվում ենք կրթության որակ հասկացության սահմանման և տարբեր շահառուների կողմից դրա ընկալումների տարբերությունների հետ: Բարձրագույն կրթության մեջ որակը բազմաչափ, բազմամակարդակ և դինամիկ հասկացություն է: Կրթության որակի վերաբերյալ պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունը և շահառու խմբերի հետ իրականացրած հարցումները ցույց են տալիս, որ սոցիալական տարբեր խմբեր ունեն կրթության որակի վերաբերյալ տարբեր ընկալումներ և տալիս են տարբեր մեկնաբանություններ: Մասնագիտական գրականության մեջ որակի ապահովման գործունեության շրջանակը որոշվում է մասնագիտական կրթության համակարգի կառուցվածքով և չափերով: Որակի կառավարումը, բարելավումը, վերահսկումը և գնահատումը որակի ապահովման գործընթացի իրականացման երաշխիքներն են: Ուսումնական հաստատության տրամադրած կրթությունը որակով է այնքանով, որքանով համապատասխանում է իր առջև դրված նպատակ(ներ-)ին: Առավել որակով է համարվում այն հաստատությունը, որը հստակ է սահ- մանում իր նպատակը և արդյունավետորեն իրականացնում այն: Նպատակը կարող է լինել սպառողի, շահառուների խմբերի կարիքները բավարարելը: Սակայն տարբեր շահառու խմբեր կրթական կարիք և կրթության որակ հաս- կացությունների վերաբերյալ ունեն տարբեր ընկալումներ:

Այսպիսով՝ կրթության որակի գնահատման մեթոդների քննարկման և շահառուների կողմից գնահատականների վերլուծման ժամանակ կարևոր է ոչ միայն դառնում օբյեկտիվ և չափելի միավորների սահմանումը, այլ նաև գնահատողի կրթության արժեհամակարգի, կրթական փորձի (առաջադիմություն, ուսումնառություն այլ կրթական հաստատություններում և այլն) և այլ գործոնների բացահայտումը, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում են որակի գնահատման գործընթացի վրա:

Հայաստանյան հանրակրթական համակարգում առկա է անհավասարություն գյուղում և քաղաքում ապրող, ինչպես նաև սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների համար՝ կրթական հնարավորությունների հասանելիության առումով: Սովորողների կրթական ձեռքբերումների, ուսման մեջ առաջադիմության, ինչպես

նաև հետագայում մասնագիտական կողմնորոշման ու բուհ ընդունվելու հարցում էական դերակատարում ունեն՝

• սովորողների ընտանիքների սոցիալ-տնտեսական կարգավիճակը,

• ծնողների կրթվածության մակարդակն,

• ընտանիքի բնակության վայրի աշխարհագրական տեղակայումը: Ուստի կարևոր է, որպեսզի պետական քաղաքականությունը՝ հանրակրթության ոլորտում, առանձնահատուկ ուշադրություն դարձնի և մեխանիզմներ ստեղծի այս խմբերի երեխաների լիարժեք ներառումը որակյալ հանրակրթության մեջ ապահովելու համար:

Հանրակրթության համարակարգում ֆորմալ կրթական մեխանիզմների, ինչպիսիք են ուսուցիչ/աշակերտ հարաբերակցություն, դասարաններում երեխաների խտություն, դասապատրաստման վրա ծախսվող ժամանակ, և այլն, բարեփոխման միջոցով հնարավոր չէ հասնել համակարգային փոփոխությունների: Առաջնահերթություն պետք է տրվեն այնպիսի խնդիրների լուծմանն ու այնպիսի խոչընդոտների հաղթահարմանը, ինչպիսիք են այդ ֆորմալ մեխանիզմներում շահերի բախումների ու սուբյեկտիվության, և հետևաբար՝ համակարգում առկա կոռուպցիայի, քաղաքականացվածության և անբարեվարք գործելաոճի վերացումը:

Համաձայն հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանության՝ առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի աճի բնութագիր, որի ձևը, լրացման և սովորողների ծնողներին տեղեկացման կարգը սահմանվում է նախարարության կողմից: Միավորներով և ստուգարքային գնահատումը կիրառվում է՝ սկսած երկրորդ դասարանից: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ (ինչպես վկայում է Ֆրանսիայի, Ֆինլանդիայի և մի շարք այլ առաջավոր երկրների փորձը) նպատակահարմար է տարրական դպրոցում ընդհանրապես գնահատականներ չնշանակվեն. դեռ ավելին՝ բացառվեն քննությունները: Հաշվի առնելով կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները՝ անհամապատասխան գնահատականը ռիսկային («ռիսկը» որևէ բանի հնարավոր վտանգն է, կորուստ)

ազդեցություն է ունենում անձի ձևավորման ու զարգացման վրա, վնասում երեխայի հոգեկան, ֆիզիկական, մտավոր առողջությունը:

Հանրակրթության պետական չափորոշչում գրված է, որ տարրական կրթության հիմնական նպատակներից է սովորողի «բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը»: Այստեղ մատնացույց է արվում կրտսեր դպրոցականի համակողմանի և ներդաշնակ դաստիարակությունն ու առողջության պահպանման կարևորությունը: «Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն» նորմատիվային փաստաթղթում նշվում է նաև, որ տարրական դպրոցն ավարտողն ուսումնական տարվա վերջին լրացնում է հատուկ մշակված հարցարան, որը հնարավորություն է ընձեռում պարզելու ուսումնական գործընթացի արդյունքում նրա ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, ինչպես նաև մտագործունեության մակարդակը: Այս ստուգումների արդյունքներն ունեն միայն տեղեկատվական բնույթ: Ցավոք, մեր օրերում այդ գործընթացը վերածվել է ծանր հոգեբանական ճնշումներով, վախերով ու լարվածությամբ ուղեկցվող քննության: Սովորողի ուսումնառության իրական պատկերը ստանալու նպատակով անհրաժեշտ է կիրառել և համադրել ստուգման տարբեր ձևեր ու տեսակներ:

Առաջնահերթ կարևորություն ունի ուսուցանող կամ ձևավորող գնահատումը: Ուսուցանող գնահատման ժամանակ սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրացման ընթացքի արդյունքները և իրենցից յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը:

Երբ սկսում ես որևէ ճանապարհորդության, շատ կարևոր է, որ իմանաս թե ուր ես գնում: Դասարանում դա մեր դասի նպատակն է կամ ուսուցման թեման:

Այդ նպատակը կարող ենք գտնել չափորոշիչում, բայց այդ նպատակին, ինչպես ամեն մի ճանապարհորդության ժամանակ, ամեն ուսուցիչ հասնում է իր ընտրած ուղով և տարբեր ժամանակներում: Մեր ճանապարհին պետք է լինեն ճանապարհային նշաններ, որպեսզի մենք կարողանանք գտնել կորցրած ճանապարհը:

Ճանապարհային նշան համար մեկ՝ նախագնահատում: Մեր աշակերտները դասարան են գալիս տարբեր գիտելիքներով և սովորելու տարբեր մշակույթով: Ամեն աշակերտ յուրովի է մոտենում խնդրին, աշխատում նյութի վրա, համագործակցում: Մենք պետք է կարողանանք պարզել, թե ինչքանով են մեր աշակերտներից յուրաքանչյուրի գիտելիքները, կարողությունները և հմտությունները համապատասխանում չափորոշչային պահանջներին: Նախագնահատումը ուսուցանող գնահատման մի ձև է, որը ուսուցչին տալիս է ճանաչել յուրքանչյուր աշակերտի հնարավորությունները, մինչև ճանապարհորդություն սկսելը:

Ճանապարհային նշան համար երկու՝ ընթացիկ գնահատում: Ճանապարհորդությունը սկսելիս ճանապարհը կորցնելը շատ հեշտ է: Ընթացիկ գնահատումը կարելի է օգտագործել հասկանալու համար, թե որտեղ է աշակերտը ուսուցման նպատակին համապատասխան ընտրված խնդիրները իրականացնելիս: Երբ աշակերտը հասնում է իր ուսումնական ճանապարհորդության վերջին՝ ուսուցիչները կարող են կիրառել թվային գնահատում, որպեսզի պարզեն, թե բոլորն են հասել <տեղ>: Թվանշանային գնահատումը իրականացման ձևերը նկարագրված են գնահատման մեթոդաբանության մեջ: Թվանշանային գնահատումը կատարվում է տաս միավորային համակարգով, որտեղ մեկ, երկու և երեք միավորները համարվում են անբավարար գնահատական:

Գնահատականը բացասական ազդեցություն ունի նաև դեռահասության և ավագ դպրոցական տարիքում: Այն ազդում է անձի ինքնակայացման վրա, նրա սոցիալական դիրքի ու տեղի վրա:

Ուսումնական գործընթացի վերահսկողության գործառույթներն են՝

1.Դաստիարակչական՝

♦յուրաքանյուր աշակերտ տեսնում է և գնահատում իր իսկ աշխատանքի արդյունքներն ու սեփական նվաճումները,

♦ձևավորվում է ուսման նկատմամբ պատասխանատու վերաբերմունք,

♦դաստիարակվում է աշխատասիրություն, անընդհատ պրպտելու և բոլոր առաջադրանքները բարեխղճորեն կատարելու ձգտում:

2. Կրթական՝

♦վերահսկողության ընթացքում կատարվում են գիտելիքների և կարողությունների ընդլայնում և խորացում, ամրակայում, ընդհանրացում, կրկնություն և համակարգում,

♦բացահայտվում են ուսումնական նյութի յուրացման գործընթացի թերությունները,

♦ակտիվանում է աշակերտների մտագործունեությունը։

3. Զարգացնող՝

♦առարկաների և երևույթների միջև առկա պատճառահետևանքային կապերի բացահայտման միջոցով զար-գանում են աշակերտների հոգեկան գործընթացները, տրամաբանական մտածողությունը և եզրահանգումներ կատարելու կարողությունները,

♦գրաֆիկական, գործնական և հետազոտական առաջադրանքներ կատարելիս տեսական գիտելիքները վերածվում են կարողությունների և հմտությունների։

4. Հայտորոշիչ՝

♦բացահայտվում և ի ցույց է դրվում աշակերտների՝ ուսումնառության, դաստիարակության, բազմաբնույթ կարողությունների և հմտությունների ձևավորման աստիճանը,

♦բացահայտվում են ուսուցման գործընթացում առկա թերություններն ու սխալները,

♦որոշվում են ուսուցման արդյունավետ մեթոդները, ընտրվում են ուսուցման գործընթացի կատարելագործման ուղղությունները,

♦արտացոլվում են ուսուցչական աշխատանքի արդյունքները, նրա աշխատանքային թերությունները։ Վերահսկողությունը, որպես ուսուցման գործընթացի բաղկացուցիչ մաս, առավել անհրաժեշտ է տարրական դպրոցում։ Հաշվի առնելով այս ամենը՝ մշակվել են վերահսկողությանը ներկայացվող մի շարք պահանջներ՝

♦Օբյեկտիվություն՝ վերահսկողություն իրականացնելիս կարևոր է ուսուցչի օբյեկտիվ մոտեցումը թե՛ աշակերտների նկատմամբ, թե նրանց կատարած աշխատանքների արդյունքները գնահատելիս։

♦Անհատական մոտեցում՝ ուսումնական գործընթացի վերահսկողության գործընթացում կարևոր է յուրաքանչյուր սովորողի նկատմամբ անհատական

մոտեցումը՝ նկատի ունենալով նրանց ունակությունների և հնարավորությունների մակարդակները, հոգեկան գործընթացների առանձնահատկությունները, ուսումնական դրդապատճառները և այլն։

♦ Կանոնակարգվածություն՝ ուսումնական գործընթացի վերահսկողության արդյունավետությունը պայմանավորված է նրա իրականացման համակարգվածությամբ և կանոնավորությամբ։ Պատահական, անկազմակերպ, չկանոնակարգված և ոչ տեղին վերահսկողությունը չի կարող արդյունավետ լինել։

♦Թափանցիկություն, վերահսկողությունը պետք է լինի պարզ, հասանելի, հիմնավոր և թափանցիկ յուրաքանչյուր սովորողի համար։ Աշակերտները պետք է միշտ իրազեկվեն, թե երբ և ինչու են այդ մակարդակով գնահատվում։

♦Բազմակողմանիություն, անհրաժեշտ է ստուգել և գնահատել ոչ միայն աշակերտների գիտելիքները, այլ նաև նրանց սովորելու պատրաստակամությունը, ստեղծագործականությունը, ինքնուրույնությունը, վերաբերմունքը, ակտիվությունը, մտքի ճկունությունը, գործնական կարողությունները, արժեհամակարգը և այլն։

♦Բարեկրթության նորմերի պահպանում, գնահատելիս երբեք չի կարելի վիրավորել սովորողի անձը, նրա ինքնասիրությունը, արժանապատվությունը։ Ուսումնական գործընթացի վերահսկողության ժամանակ տարրական դպրոցի ուսուցիչը պետք է հետևի բարեկրթության կանոններին ևսովորոցնի իր սաներին։

♦ Խթանող բնույթը, վերահսկողությունը չպետք է վախեցնի և հիասթափեցնի կրտսեր դպրոցականներին, այլ հակառակը՝ այն պետք է խթանի նրանց տարաբնույթ գործունեությունը, ոգևորի և աջակցի առաջխաղացմանը։

Վերահսկողության կազմակերպումը պահանջում է, մի շարք պայմանների ապահովում։

Սովորողները պետք է՝

♦Նախապես տեղեկացված լինեն վերահսկողության ժամկետների մասին,

♦ծանոթ լինեն վերահսկողության նպատակներին, բովանդակությանը և անցկացման ձևերին,

♦գնահատականը բարձրացնելու նպատակով ունենան ուսումնական նյութը վերահանձնելու հնարավորություն։

http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829 Հանրակրթության պետական կրթակարգի մասին։

2.2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

- **Ցուցանիշային (նորմատիվային) գնահատում**

Գնահատման արդյունքների հիման վրա՝ սովորողները դասակարգվում են ըստ առաջադիմության՝ դասարանի կամ գնահատմանը մասնակցած խմբի մյուս անդամների հետ համեմատության մեջ: Նորմատիվային գնահատման միջոցով, ըստ ուսուցանված նյութի տիրապետման աստիճանի,ուսուցիչը դասակարգում է աշակերտներին: Այսպիսի դեպքերում հնարավոր է հաշվարկել յուրաքանչյուր աշակերտի համեմատական միավորը: Գնահատման այս տեսակը նպատակահարմար է օգտագործել տվյալ տարվա ձեռքբերումները նախորդ տարիների ձեռքբերումների հետ բաղդատելիս, ինչպես նաև հետագա աշխատանքների արդյունավետության նպատակով՝ դասարանը խմբերի բաժանելու, կամ ըստ աշակերտների կարողությունների նոր դասարաններ կազմելու համար:

- **Հայտանիշային կամ չափանիշային գնահատում**

Չափանիշային գնահատումը հենվում է բացառապես սովորողի՝ տվյալ նյութի իմացության վրա՝ անկախ դասընկերների տիրապետման աստիճանից: Գնահատման այս տեսակը նպատակահարմար է օգտագործել ուսումնական առարկայի տիրապետման շարունակականությունն ուրվագծելու և համապատասխան ոլորտներն ընդգծելու նպատակով:

- **Սուբյեկտիվ գնահատում**

Գնահատումը սուբյեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական դատողություններից, սկզբունքներից և վերաբերմունքից: Սուբյեկտիվ են գնահատվում բանավոր հարցումները,պատասխանի շարադրանքով առաջադրանքները, կամ որոշ գործնական աշխատանքներ: Բանավոր արտահայտվելու պահանջ ունեցող ուսումնական առարկաների պարագայում սուբյեկտիվ գնահատում ասելով հասկանում են սովորողի բանավոր խոսքով արտահայտվելու որակի մասին դատողությունները: Սուբյեկտիվ գնահատումը պետք է արվի հնարավորինս արդարացի, քանի որ դրա արդյունքները երբեմն օգտագործում է երրորդ կողմը՝ գնահատված անձանց ապագայի վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Խաչատրյան Հ., Գնահատումը տարրական դպրոցում, Նախաշավիղ, 2007 5-6, էջ 109-116:
Ս.Գ.Խաչատրյան, Կրտսեր դպրոցում մայրենիի դասավանդման մեթոդիկա,2018թ. էջ 88-95:

Որքանով էլ ուսումնական գործընթացում սուբյեկտիվ գնահատումն անխուսափելի է, այդուամենայնիվ, որպես սկզբունք պետք է հնարավորինս նվազեցնել սուբյեկտիվ գնահատման օգտագործումը միավորային գնահատման պարագայում: Սուբյեկտիվության տարրեր կան գնահատման բոլոր տեսակներում:

Օբյեկտիվ գնահատում

Այս դեպքում առաջադրանքի պատասխանի գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից:

Օբյեկտիվ գնահատումն իրագործվում է հիմնականում անուղղակի միջոցներով:

Օրինակ, ընթերցանությունը կարող է գնահատվել անուղղակիորեն՝ պահանջելով սովորողից ընտրել տրված հարցի համար առաջարկվող պատասխաններից իր կարծիքով ճիշտը, ավարտել կիսատ նախադասությունը, պատասխանել տեքստի վերաբերյալ հարցերին: Այս նպատակին են ծառայում նաև այն թեստերը, որոնցում ընդգրկված առաջադրանքներն ունեն միակ ճիշտ պատասխան, և աշակերտն առաջադրանքի վերջում նշված մի քանի պատասխաններից ընտրում է մեկը:

Տարրական դպրոցում առանձնացվում են սովորողների ուսումնական գործունեության վերահսկողության հետևյալ տեսակները.

♦արտաքին՝ ուսուցիչն է իրականացնում աշակերտների ուսումնական վերահսկողությունը,

♦փոխադարձ՝ աշակերտներն իրականացնում են փոխադարձ վերահսկողություն,

♦ինքնավերահսկողություն՝ աշակերտներն իրենք են իրականացնում իրենց իսկ ուսումնական գործունեության վերահսկողությունը: Ժամանակակից տարրական դպրոցում կիրառվում են վերահսկողության հետևյալ մեթոդները, ձևերը.

♦բանավոր հարցում,

♦գրավոր հարցում,

♦տնային աշխատանքների ստուգում,

♦գործնական վերահսկողություն,

♦թեստային վերահսկողություն,

♦թղթապանակի ներկայացում:

Բանավոր հարցումը վերահսկողության ամենատարածված ձևն է: Այն սովորողի բանավոր պատասխանն է յուրացրած ուսումնական նյութի շուրջ: Հարցումը կարող է լինել անհատական, ընդհանուր և համակցված:

Ուսուցիչը գնահատելուց պետք է ուշադրություն դարձնի սովորողի լրացուցիչ աշխատանքներին: Սովորողը պետք է կատարի համապատասխան անհատական առաջադրանքներ ուսուցչի ներկայությամբ, որպեսզի արդար գնահատական լինի, և գնահատվի հենց սովորողի գիտելիքը:

Տարրական դպրոցում տնային աշխատանքների ստուգման բաղադրիչն ունի մի շարք առանձնահատկություններ՝

♦որպես տնային աշխատանք հանձնարարվում են միայն այն առաջադրանքները, որոնք նախապես պարզաբանված են և աշակերտներին հասկանալի,

♦տնային աշխատանքները պետք է մատչելի լինեն բոլոր սովորողներին,

♦չի կարելի կրտսեր դպրոցականներին չափից ավելի ծանրաբեռնել տնային աշխատանքներով, առաջադրանքներով,

♦անհրաժեշտ է կարևորել տնային առաջադրանքների կատարման ինքնուրույնությունը, քանի որ այս տարիքում հաճախ երեխաների փոխարեն ծնողներն են կատարում բոլոր հանձնարարությունները: Թեստային վերահսկողությունն արդի կրթական համակարգում վերահսկողության ամենատարածված ձևն է: Թեստը հարցերի և որոշակի հանձնարարությունների հավաքածու է, որոնց անվանում են կրթվածության կամ նվաճումների թեստեր և միտված են աշակերտների կրթվածության մակարդակի ստուգմանը:

Ստուգումը վերահսկողության գործընթացի հիմնական բաղադրիչն է, որի դիդակտիկական գործառույթը ուսուցչի և սովորողների միջև հետադարձ կապի ապահովումն է, որի միջոցով մանկավարժը տեղեկույթ է ստանում սովորողների կողմից գիտելիքների յուրացման մակարդակի վերաբերյալ: Գնահատումն ունի առավել լայն իմաստ: Այդօրինակ գնահատումը պետք է համարժեք լինի սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններին և պարունակի անձի զարգացման մասին ընթացիկ տեղեկույթ: Այս նպատակով գնահատման նոր հայեցակարգում առանձնացվել է <<Ուսուցանող կամ արժևորող գնահատում>> հասկացությունը, որն ընձեռում է հնարավորություն վերոհիշյալ

խնդիրները մասամբ լուծելու: Ընթացիկ գնահատման տարբեր ձևերի ու տեսակների կիրառումը, տասը միավորային սանդղակի ներդրումը, անշուշտ, կնպաստեն ուսուցման գործընթացի բարելավմանը, սովորող–ուսուցիչ-ծնող-դպրոց փոխհամագործակցության ապահովմանը: Առաջնորդվելով կրթական բարեփոխումների արդի պահանջներով՝ սովորողների ձեռքբերումների գնահատումը պետք է կիրառել ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման և վերահսկման միջոց, այլ նաև այն դարձնել ուսումնադաստիարակչական գործընթացի անբաժանելի մաս: Որպես գնահատական կարող է հանդես գալ ուսուցչի դիմախաղը, ժեստերը, խոսքը և այլն: Բացի թվանշանից, ուսուցիչը կիրառում է խոսքային գնահատումները՝ շա՛տ լավ է, «ապրե՛ս, «կարող էիր ավելի լավ պատասխանել, այսօր լավ չես աշխատում և այլն:

Կառավարությունը հաստատել է հանրակրթության նոր պետական չափորոշիչը, որով նախատեսվում է բազմազանեցնել գնահատման կարգը:

Միավորային գնահատումը պետք է գործի 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից, ինչը նշանակում է, որ տարրական դպրոցում առաջարկվում է կիրառել ավելի խրախուսող գնահատման ձևեր:

ԿԳՄՍ նախարարությունից տեղեկացնում են, որ մինչ Կառավարության հաստատմանը ներկայացվելը չափորոշչի նախագիծն անցել է հանրային և մասնագիտական քննարկումների տևական փուլ, ներկայացված բազմաթիվ առաջարկների հիման վրա նախագիծը շտկվել, խմբագրվել ու լրամշակվել է:

Գնահատման համակարգում ևս կատարվում է կտրուկ փոփոխություն. առաջարկվում է կրտսեր դպրոցում հրաժարվել միավորային գնահատումից՝ կիրառելով խրախուսական բնութագրումներ, իսկ միավորային գնահատումը կգործի 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից: Առաջարկվում է նաև հրաժարվել «անբավարար» գնահատականից, ինչը նշանակում է, որ այլևս չի գործի հաջորդ դասարան չփոխադրվելու, նույն դասարանում մնալու և կրթական ծրագիրը կրկնելու ինստիտուտը: Չափորոշչի վերջնական ներդրումը՝ 2023 թվականից:

Միքայելյան Օ., Սովորողների ընթացիկ գնահատման նոր համակարգի առանձնահատկությունները, 2011-2, էջ 3-9:

ՀՀ վարչապետ <<Տարրական դպրոցում առանց գնահատականների>> 05 փետրվար 2021թ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտական աշխատանքի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունը.

- Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և հանրակրթության ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքների ճշգրտում:
- Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են կրթության որակի բարելավմանը խոչընդոտող գործոններ, որոնք անմիջապես կապված լինելով գնահատման համակարգի հետ՝ երբեմն խնդիրներ են առաջացնում: Այդ խնդիրները լուծելի են դառնում շնորհիվ մանկավարժական հմտությունների:
- Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումը և դրա հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի վերահսկումն է:
- Սովորողի ուսումնառության իրական պատկերը ստանալու նպատակով անհրաժեշտ է կիրառել և համադրել ստուգման տարբեր ձևեր և տեսակներ:
- Բարեփոխումը ենթադրում է գնահատման նոր համակարգի ներդրում՝ հանրակրթության իրական վիճակի վերլուծման, նրա զարգացման ուղղությունների որոշման, հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման ապահովման և միջազգային կրթական համակարգերին ինտեգրվելու նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յ., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, «ՄԱՆԿԱՎԱՐԺ » հրատ. 2005թ., 455 էջ:
2. Գևորգյան Լ.Վ - Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն»
3. Գնահատումն ու ինքնագնահատումը դպրոցում,Մանկավարժություն, 2008/5-6:
4. Խաչատրյան Հ., Գնահատումը տարրական դպրոցում,Նախաշավիղ, 2007 5-6, էջ 109-116:
5. Խաչատրյան Ս.,Գործնական աշխատանքները դպրոցում, Նախաշավիղ, 2010-4, էջ 14:
6. Խաչատրյան Ս.Գ., ԷԴՓ, Մայրենիի դասավանդման մեթոդիկա, էջ 81-83:
7. Ղույումչյան Գ. Ե. , Մանկավարժություն :Դասագիրք բուերի համար: Երևան, Զանգակ-97, 2005 թ. 357-362 էջ
8. Միքայելյան Օ.Ս., Ընթացիկ գնահատման նորհամակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Երևան, 2010, 81 էջ:
9. ՄալխասյանՍ., Մալխասյան, Գնահատումն ու ինքնագնահատումը դպրոցում, Մանկավարժություն, 2008/5-6 :
10. Միքայելյան Օ., Սովորողների ընթացիկ գնահատման նոր համակարգի առանձնահատկությունները, Նախաշավիղ, 2011-2, էջ 3-9:
11. Սարգսյան Մ., Սիսյան Ս.,Դպրոցի ուսուցչի մանկավարժական վարպետության ձևավորման և ինքնազարգացման գործընթացը, Մանկավարժական միտք, էջ 210-213:
12. Կրթական բարեփոխումներ. «Մայրենի» առարկայից սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատումը, Նախաշավիղ, 2010-1, էջ 3-20:

Էլեկտրոնային աղբյուրներ

1. https://www.panorama.am/am/news/2008/07/09/gnahatum/1315055 Գնահատման նոր համակարգ(հասանելի է 23.ապրիլ, 20:46)

2. http://shirakatsy.am/wp-content/uploads/2015/10/PYP_Assessment_Policy_Arm.pdf Գնահատման քաղաքականություն, 2015 թ. (հասանելի է 23. ապրիլ, 20:43):

3. http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829 Հանրակրթության պետական կրթակարգի մասին(հասանելի է 23. ապրիլ, 17:43):

4. https://escs.am/am Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրությունը (1 հունիսի 2019 թվականի N 661-Լ)

5. https://www.civilnet.am/news/ Հանրակրթության նոր պետական չափորոշիչը 05 Փետրվար , 2021